ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԸ*

Մարութ Վարդազարյան

Ուկրաինական ճգնաժամը արտացոլվեց ոչ միայն ռուս-ուկրաինական, Ռուսաստան-Արևմուտք փոխհարաբերություններում, այլև անդրադարձավ ռուսաստանյան հասարակության ինքնագիտակցության վրա, ծավալվեցին քննարկումներ ՌԴ զարգացման վեկտորի ուղղությունների, իշխանության և հասարակության միջև ձևավորված հարաբերությունների, կայսրություն, թե ազգային պետության կառուցման հարցերի շուրջ:

ՌԴ-Արևմուտք հակամարտությունն ունի նաև խորքային բնույթ: Այն բխում է մի կողմից՝ լիբերալիզմի, իսկ մյուս կողմից՝ ռեալիզմի ու պահպանողականության միջև առկա հակասություններից: Չիկագոյի համալսարանի քաղաքագիտության պրոֆեսոր Ջոն Միրշայմերը գտնում է, որ ամերիկյան և եվրոպական քաղաքական էլիտան հետևում էին այն թյուր տեսակետին, որ սառը պատերազմից հետո համաշխարհային քաղաքականությունը արմատական տրանսֆորմացիայի է ենթարկվել, որ ռեալիզմի տրամաբանությունն այլևս հրատապ չէ և ՆԱՏՕ-ի ընդլայնման քաղաքականությունը նախ և առաջ «ժողովրդավարության» ընդլայնում է[1]: Ջ. Միրշայմերը նշում է «Միացյալ Նահանգների հաղթանակից հետո լիբերալներից մեծ ջանքեր չպահանջվեց իրենց եվրոպական դաշնակիցներին համոզելու, որ աջակցեն ՆԱՏՕ-ի ընդլայնմանը: Վերջիվերջո եվրոպացիները, հաշվի առնելով անցած տարիների իրենց նվաճումները, ավելի շատ, քան ամերիկացիները համակերպվել էին այն գաղափարին, որ աշխարհաքաղաքականությունը այլևս էական դեր չի խաղում և համապարփակ ամերիկյան կարգերը թույլ կտան Եվրոպայում պահպանելու խաղաղություն»[2]: Ջոն Միրշայմերի կարծիքով՝ լիբերալ աշխարհայացքը գերակշռում է նաև ներկայիս ԱՄՆ-ի վարչակարգում և ինչպես Բ. Օբաման, այնպես էլ պետքարտուղար Ջ. Քերրին Ուկրաինայի իրադարձությունների վերաբերյալ իրենց ելույթներում օգտագործում են լիբերալներին բնորոշ մոտեցումները: Նա գտնում է, որ այսպիսով ուկրաինական ճգնաժամի զարգացման արդյունքում համաշխարհային քաղաքականությունում առկա են երկու մոտեցումներ՝ Վ. Պուտինը իր համախոհների հետ գործում է որպես ռեալիստ, իսկ Արևմուտքը որպես լիբերալ[3]:

Ուկրաինական մայդանը մահացու հարված հասցրեց նաև ռուսական լիբերալիզմին: Այսօր դժվար է Ռուսաստանում գտնել որևէ մեկին, ով կհամաձայնի վերապրել այն ամենը, ինչ տեղի ունեցավ Կիևում, կամ ընթանում է Արևելյան Ուկրաինայում: Ռուսական լիբերալիզմը ամենախոր արմատներ թողեց արտաքին քաղաքականությունում և այդ իսկ պատճառով ներկայիս ռուսական լիբերալների »դժգոհությունը» հասկանալու համար ներկայացնենք այն լիբերալ տեսաբանների հայացքները, որոնք ՌԴ-Արևմուտք հարաբերություններում ընդհանուր գծերով արտացոլում են այդ հոսանքին բնորոշ դիֆերենցված մոտեցումները, քանի որ դրանք վատթարացան հիմնականում երկու կողմերի վարած արտաքին քաղաքականության արդյունքում:

Ռուսաստանում անցկացված սոցհարցումները ցույց են տալիս, որ 2000 թ-ից հետո «պուտինյան կառավարման» շրջանում ռուսաստանյան հասարակության շրջանում արտաքին քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունն անհամեմատ ավելի մեծ

** Հոդվածն ընդունվել է 06.02.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Գարիկ Քեռյանը:

էր, քան ներքին քաղաքականության նկատմամբ: Միջազգային բնագավառում ՌԴ դերի մեծացումը այն գլխավոր գործոններից էր, որ նպաստեց հասարակության շրջանում Վ. Պուտինի վարչակարգի նկատմամբ դրական վերաբերմունքի աճին: Այդ իսկ պատճառով անդրադառնանք նաև արտաքին քաղաքականության վերաբերյալ լիբերալների մոտեցումներին:

Իգոր Յուրգենսը, 2010թ. հունիսից Գր. Յավլինսկու, Բորիս Տիտովի, Վլադիսլավ Ինոզեմցևի հետ գլխավորում է «Հանուն արդիականացման» հասարակական շարժումը: Նրան վերագրում են Դ. Մեդվեդևի ոչ պաշտոնական խորհրդականի դերը:

Նրա կարծիքով՝ Ռուսաստանի արտաքին քաղաքականության հիմնական վեկտոր պետք է հանդիսանա եվրոպականը, քանի որ ԵՄ ունի մարդկային, տեխնոլոգիական, մշակութային զգալի ներուժ և առանց Եվրոպայի հետ միավորման Մոսկվան իր գոյությունը պահպանելու համար դատապարտված է տասնամյակներ շարունակ մղելու ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական պայքար[4]: Ի. Յուրգենսը գտնում է, որ Ռուսաստանը պետք է հայտարարի ԵՄ հետ համագործակցության իր հստակ նպատակների մասին, որոնք բնականաբար չեն կարող հակասել Բրյուսելի շահերին: Արևմուտքի հետ համագործակցությունը կարևորվում է նաև ռուսական քաղաքական համակարգի արդիականացման տեսանկյունից, որը մտել է փակուղի, և միակ ելքը երկրի տնտեսության և քաղաքական համակարգի ազատականացումն է[5]: 2010 թ. մարտի 17-ին նա ներկայացրեց «Ռուսաստանը XX դարում՝ վաղվա ցանկալի կերպարը» զեկույցը, որտեղ նշում է, որ «ինձ համար ամենահետաքրքիր հարցադրումները կապված են ԵՄ և ՆԱՏՕ-ի հետ, որովհետև չկան երաշխիքներ, որ նրանց հետ չինտեգրվելու դեպքում մենք ետ չենք վերադառնա: Եթե Ռուսաստանը տնտեսական և արժեքային համակարգով չինտեգրվի Արևմուտքի հետ, ապա նրան կմնա միայն դեպի Չինաստան ուղին, որը կարող է բնակչության համար ավելի թանկ արժենալ, իսկ քաղաքակրթական առումով ապացուցված չէ, որ մենք համատեղելի ենք»[6] Ի Յուրգենսի կարծիքով՝ Վ. Պուտինը փայլուն իրականացրեց իր առաջին նախագահության ութ տարիների ընթացքում ՌԴ առջև ծառացած խնդիրների լուծումը (կանխեց անջատողական շարժումները, չեչենական ահաբեկչությունը, ռուբլու արժեզրկումը և այլն), սակայն Դ. Մեդվեդևից հետո անհրաժեշտ է այնպիսի նախագահ, որը կիրականացներ միանգամայն այլ բնույթի խնդիրներ:

Վլադիմիր Ինոզեմցևը գտնում է, որ ՌԴ, գտնվելով Եվրոպայի և Ասիայի միջև, չի կարող նրանց համար հանդիսանալ կարևոր գործընկեր, քանի որ, եթե 2005 թ. ԵՄ ՀՆԱ կազմում է 17 տրլն դոլար, Չինաստանի և Ճապոնիայի ՀՆԱ կազմում էր 14 տրլն դոլար, ապա Ռուսաստանինը համապատասխանաբար՝ 2 տրիլիոն ամերիկյան դոլար: Հետևաբար Ռուսաստանը չի կարող տվյալ պահին հանդիսանալ համարժեք ուժի կենտրոն և պետք է Արևելքի ու Արևմուտքի միջև ընտրություն կատարի: Վ. Ինոզեմցևի կարծիքով ինչքան հստակ լինի Ռուսաստանի ընտրությունը, այնքան նա զարգացման ավելի լայն հնարավորություններ կստանա: Ռուսաստանն ավելի ինտեգրված է Արևմուտքի հետ, հումքային առումով Ռուսաստանն ավելի թույլ է ներկայացված Արևելքում, որը, ՌԴ-ն դիտարկելով որպես նոր մրցակից, շահագրգռված չէ նրա արդիականացմամբ: Եվրոպական կարիք ունի ռուսական հումքի, իսկ Մոսկվան՝ եվրոպական տեխնոլոգիաների: ՌԴ-ի արդիականացումը Եվրոպայի համար աուտսորսինգի նոր հնարավորություններ կստեղծի[7]:

Վ. Ինոզեմցևի առաջարկությամբ Ռուսաստանը նույնիսկ պետք է ակտիվորեն ԱՄՆ-ի, ԵՄ և Լատինական Ամերիկայի որոշ երկրների հետ մասնակցի ընդդեմ «նոր

Արևելքի»՝ «նոր Արևմուտքի» ձևավորմանը, որը նախ և առաջ պետք է ուղղված լինի Չինաստանի դեմ: Նոր «ընդլայնված Արևմուտքը» քաղաքական և տնտեսական առումով կդառնա համշխարհային քաղաքականության հզոր սուբյեկտ, որում ընդգրկվելով՝ Ռուսաստանը կմեծացնի իր արդիականացման հնարավորությունները[8]:

Դ. Տրենինը Վ. Պուտինի նախագահության շրջանում ՌԴ-Արևմուտք և մասնավորապես ՌԴ-ԱՄՆ հարաբերությունների վատթարացումը բացատրում է այն հանգամանքով, որ Արևմուտքում չեն վստահում Մոսկվային: Ամերիկացիների համար Ռուսաստանը կառավարվում է ավտորիտար վարչակարգով և ի տարբերություն Եվրոպայի՝ իրենց «շրջապատի» մեջ չեն դասում: Ավելին՝ Մոսկվան ժողովրդավարության իր տարբերակն է հռչակել («սուվերեն դեմոկրատիա»), որը չի ընկալվում ամերիկացիների կողմից: Դ. Տրենինի կարծիքով՝ այդ հակամարտության հաղթահարումը դեռևս երկար ժամանակ կպահանջի[9]:

Նա գտնում է, որ աշխարհագրական, պատմական, մշակութային, ազգագրական առումով Ռուսաստանը եվրոպական երկիր է և պետք է քայլեր ձեռնարկի Եվրոպայի հետ ինտեգրվելու ուղղությամբ: Նրա կարծիքով՝ այդ տեսանյունից Ռուսաստանի համար մոտ հեռանկարում գլխավոր խնդիրը ներքին բարենորոգումներն են, որը ենթադրում է համապատասխան արտաքին քաղաքականություն, այսինքն՝ ԱՄՆ-ի և ԵՄ հետ բարեկամական հարաբերությունների հաստատում (եվրոպական ասոցիացիա): Այս ինտեգրացիան կմեծացնի ՌԴ միջազգային հեղինակությունը, իսկ Ռուսաստանը չի կորցնի իր անհատականությունը[10]:

Զարգացնելով իր մտքերը՝ Դ. Տրենինը 2011 թ. գրած իր հայտնի ,Արտաքին քաղաքականություն. Ինչպիսի դեր կարող է խաղալ Ռուսաստանը նոր տասնամյակումե հոդվածում նշում է, որ ՌԴ արտաքին քաղաքականությունը ժամանակին համահունչ և կայուն դարձնելու համար առաջին հերթին պետք է ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ գիտակցորեն վարել հարաբերություններն ապառազմականացնելուն ուղղված անշրջելի կուրս, ԵՄ հետ կառուցել համաեվրոպական ընդհանուր տարածք, ինչպես նաև Արևմուտքի հետ ձևավորել եվրոատլանտյան անվտանգության գոտի[11]:

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքին, ապա Դ. Տրենինը կարծում է, որ ռեսուրսների սղությունը Մոսկվային հնարավորություն չի տալիս «մերձավոր արտասահմանը» լիովին վերահսկելու համար, բայց ՌԴ միաժամանակ չի ցանկանում այն կիսել ուրիշի հետ: Չնայած ՌԴ համար ԱՊՀ հայտարարվել է որպես առաջնահերթ ռազմավարական տարածաշրջան, սակայն իրականում Մոսկվան դեռևս պատրաստ չէ «բարեփոխված միություն» ստեղծելու համար լուրջ ներդրումներ իրականացնել [12]:

Ամփոփելով իր մոտեցումները՝ Դ. Տրենինը գտնում է, որ մշակութային առումով Ռուսաստանը եվրոպական երկիր է, իսկ քաղաքական առումով դեռևս Եվրոպային չի պատկանում: Բազմաթիվ ասիացիներ Ռուսաստանը ևս «իրենցը չեն համարում»: Նկատի ունենալով, որ Ռուսաստանը չի կարողանում, կամ չի ցանկանում որոշ երկրների ինտեգրել ԱՊՀ-ին, ապա դժվար թե կարողանա ինտեգրվել Եվրոպայի հետ: Դ. Տրենինը դա համարում է «չարիքների փոքրագույնը», քանի որ ռուսական հասարակությունն իր մեջ ուժեր կգտնի դուրս գալու այդ հեղհեղուկ վիճակից և կսկսի կառուցել հետկայսերական ազգային պետություն, որն իր արժանի տեղը կգտնի աշխարհի քաղաքական քարտեզում որպես եվրոպական խաղաղօվկիանոսյան ազգ[13]:

Լիբերալներից Ա. Մելվիլը գտնում է, որ ՌԴ դատապարտված է իր արտաքին քաղաքականությունում շարժվել ազատական գաղափարներով և համագործակցել Արևմուտքի հետ: Տարածքային առումով ստեղծվելով Եվրոպայում՝ ռուսական պետությունը ընդլայնվեց Ասիայի հաշվին՝ ներառելով բազմաթիվ «ոչ եվրոպական» տարրեր:

Եվրոպայի և Ասիայի միջև Ռուսաստանի զբաղեցրած «միջին» դիրքը ոչ թե նրա էությունն է, այլ ձեռքբերովի է, որն իրականացվել է կայսրության կառուցման ընթացքում: «Երրորդ Հռոմի», «Ուղղափառություն, ժողովուրդ, ինքնակալություն» և «կոմունիզմի» գաղափարախոսությունները, պատկանում էին կայսերական պարադիգմային, որը որպես ազգային պետություն դանդաղեցրեց Ռուսաստանի զարգացումը[14]: Ժամանակակից ՌԴ-ն աշխարհաքաղաքական առումով չի կարելի դիտարկել որպես «կրճատված» Ռուսական կայսրություն, կամ ԽՍՀՄ, այսինքն՝ «աշխարհի առանցքը»: Քննադատելով «եվրասիականության» կողմնակիցներին՝ նա քաղաքական առումով առաստպել է համարում այն թեզը, թե Ռուսաստանը կարող է եվրասիական »կամուրջ» հանդիսանալ Արևմուտքի և Արևելքի միջև: Ա. Մելվիլը այն անիրատեսական է համարում, քանի որ Ռուսաստանը չունի ոչ համապատասխան կոմունիկացիաներ, ոչ տեխնոլոգիական, ինչպես նաև տնտեսական, և ոչ էլ հստակ ձևակերպված մշակութային-քաղաքակրթական միջնորդական ֆունկցիաներ: Նա ձախողված է համարում ՌԴ արտաքին քաղաքականությունը, քանի որ Ռուսաստանը ինտեգրացիոն գործընթացների մասնակից չհանդիսացավ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում: Ռուսաստանին չհաջողվեց կանգնեցնել ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի Արևելք, Բալկաններում Մոսկվան անհաջողություն կրեց նաև Բալկաններում, Չինաստանից դեպի Եվրոպա ապրանքաշրջանառությունը, ինչպես նաև Կասպից ծովի էներգակիրները դեպի արևմուտք տեղափոխվում են՝ շրջանցելով Ռուսաստանը[15]:

Նրա կարծիքով՝ ԱՊՀ նախագիծը լիարժեք չկայացավ ոչ թե քաղաքական սխալների, կամ անբավարար կամքի արդյունքում, այլ ավելի խորքային պատճառներով: Ռուսաստանն ինքը առաջինը լքեց Խորհրդային կայսրությունը և ոչ միայն ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացները ղեկավարելու համար չունի անհրաժեշտ ռեսուրսներ, այլև ԱՊՀ բազմաթիվ երկրների քաղաքական, պատմական և քաղաքակրթական զարգացման վեկտորները միշտ չէ, որ համընկնում են ռուսականի հետ[16]:

Լիբերալ մյուս քաղաքագետ Նիկոլայ Զլոբինը գտնում է, որ մոլորակի համար ավելի սարսափելի կլիներ, եթե Սառը պատերազմում հաղթեր Խորհրդային Միությունը[17]: Նա գտնում է, որ նույնիսկ մեկ տասնամյակ անց, եթե ՌԴ տնտեսական առումով աշխարհում դառնա 5-6-րդ երկիրը, ապա ԱՄՆ-ի հետ հարաբերակցությունը կլինի 4-1 հօգուտ ԱՄՆ-ի, հետևաբար արդյունավետ չէ պայքարել ընդդեմ ԱՄՆ-ի, ՆԱՏՕ-ի և Արևմուտքի: Նրա կարծիքով՝ գլոբալացման շրջանում պուտինյան ուղղաձիգ իշխանությունը անարդյունավետ է և ՌԴ ապագան համադաշնությունն է: Ինչ վերաբերում է ազգային գաղափարախոսությանը, ապա ինտերնետի և արբանյակային հեռուստատեսության պայմաններում այն կորցնում է իր իմաստը: Ղրիմի հարցում նա գտնում է,որ Ռուսաստանը և Ուկրաինան իզուր են պայքարում այդ թերակղզու համար, որովհետև այն 25 տարի անց մահմեդական է դառնալու և միանալու է Թուրքիային[18]:

Այսպիսով՝ ռուս ազատականների կարծիքով, քանի որ Ռուսաստանի հավակնությունները չեն համապատասխանում նրա ռեսուրսներին և Ռուսաստանը յուրային չէ Ասիայի համար,ապա նա պետք է հրաժարվի իր քաղաքական միսիայից ու հստակ իրականացնի իր քաղաքական ու գաղափարական ընտրությունը (իհարկե արևմտյան) և այդ ճանապարհով ապահովի իր առաջընթացը, ապահովի այդ ճանապարհով:

Այսպիսով, եթե խտացված ներկայացնենք ռուս լիբերալների մոտեցումները, ապա «դեմոկրատիան դեմոկրատիայի դեմ չի մարտնչում», պետք է մերձենալ Արևմուտքի դեմ, որը, սահմանակից դառնալով Ռուսաստանին, չի սպառնա նրան, քանի որ Արևմուտքը ազատության և դեմոկրատիայի կրողն է և եթե իրականում Ռուսաստանը Արևմուտքին չսպառնա, ապա նրանք նույնիսկ ռուսներին կպաշտպանեն չինացիներից:

Գաղափարական արժեքները փոխվում են այն ժամանակ, երբ չեն համապատասխանում իրականությանը: Ռուսաստանցիները դեռևս հիշում են լիբերալների կողմից իրականացված «դեմոկրատական» բարեփոխումները, 1990-ական թվականներին իրականացված «շոկային թերապիան», քաղաքական և տնտեսական անկայուն վիճակը, ժողովրդի զգալի հատվածի աղքատացումը, անջատողական շարժումների ակտիվացումը և այլն: Վ. Պուտինի իշխանության գալով՝ քաոսը փոխվեց կարգ ու կանոնով, քաղաքական պլյուրալիզմը՝ ուղղաձիգ իշխանությամբ, արմատական բարեռորոգումները՝ կայունությամբ, համաշխարհային քաղաքակրթությունը՝ «ռուսական աշխարհով»:

Մինչև ուկրաինական ճգնաժամը՝ Վ. Պուտինը երբեք կտրուկ բացասական չի արտահայտվել ռուսական լիբերալ քաղաքական գործիչների կամ գործարարների մասին: Վ. Պուտինը դեմ չէր նաև եվրոպական ինտեգրացիային: Նրա «Մեծ Եվրոպան», որը ընդգրկելու էր Լիսաբոնից մինչև Վլադիվոստոկ, ենթադրում է, որ Ռուսաստանը Եվրոպայի հետ հանդես էր գալու որպես հավասարազոր կողմ, այլ ոչ թե որպես եվրոպական թափոնների գերեզմանոց, կամ հումքային բազա:

Վ. Պուտինը իր առաջին նախագահության շրջանում աշխատում էր խորացնել համագործակցությունը Արևմուտքի հետ մի շարք օբյեկտիվ պատճառներով: Ռուսաստանը սահմանակից է անհանգիստ իսլամական աշխարհին, ռուս-չինական սահմանը ավելի քան 4 հազար կիլոմետր է, իսկ արևմուտքում սահմանակից է Եվրամիության: ՌԴ ապրում էր տնտեսական, քաղաքական և ժողովրդագրական բավական լուրջ ճգնաժամ: Իր հերթին Արևմուտքը Իրանի, Իրաքի, Աֆղանստանի և մերձավորարևելյան ճգնաժամի կապակցությամբ ևս զգում էր Մոսկվայի աջակցության կարիքը: Նկատի ունենալով այդ ամենը՝ ՌԴ նորընտիր նախագահ Վ. Պուտինը ևս կարծում էր, որ Ռուսաստանի համար տնտեսական առումով ձեռնտու չէր առճակատումը Արևմուտքի հետ: Մոսկվան փորձեց նախ և առաջ խորացնել համագործակցությունը ԱՄՆ-ի հետ:

2000 թ. Նյու-Յորքում կայացած «հազարամյակի գագաթաժողովի» ժամանակ Բ. Քլինթոնը և Վ. Պուտինը ստորագրեցին համատեղ հայտարարություն «Ռազմավարական կայունության բնագավառում համագործակցության նախաձեռնության մասին»[19], 2002 թ. մայիսի 24-ին ստորագրվեց ՌԴ և ԱՄՆ-ի միջև նոր ռազմավարական հարաբերությունների մասին հռչակագիր[20]: Վ. Պուտինի նախաձեռնությամբ 2007 թ. ապրիլին ստեղծվեց «Ռուսաստան-ԱՄՆ» աշխատանքային խումբը, որի աշխատանքները ռուսական կողմից ղեկավարում էր Ե. Պրիմակովը, իսկ ամերիկյան կողմից՝ Հ. Քիսինջերը: Վ. Պուտինի առաջին նախագահության ընթացքում նույնիսկ ամերիկյան փորձագետներն էին ստիպված ընդունելու, որ «նախագահ Պուտինի ունեցած կայուն ժողովրդականությունը, նրան անկասկած հնարավորություն է տալիս ղեկավարելու Ռուսաստանը հետխորհրդային ինստիտուտների ձևավորման հերթական փուլում, իսկ նրա իշխանությունում գտնվելը որոշակի դրական արդյունքների հանգեցրեց: Նրա առաջին նախագահական ժամկետում տնտեսական լիբերալացումը նոր ազդակ ստացավ»[21]: Նշենք նաև, որ ՌԴ և ԱՄՆ-ը չունեն ընդհանուր սահմաններ, և միմյանց հետ տարածքային խնդիրներ: ԱՄՆ-ի համար գլոբալ անվտանգության տեսանկյունից այս համագործակցությունը ևս կարևորվում է, քանի որ ռազմական տեսանկյունից Ռուսաստանը միակ երկիրն է, որ կարող է սպառնալ Վաշինգտոնին: Մոսկվայի համար Արևմուտքի հետ համագործակցությունը կարևորվում էր նաև այն տեսանկյունից, որ ՌԴ այդ ժամանակահատվածում կենտրոնացել էր ներքին բարեռորոգումների վրա և ռեսուրսների սահմանափակության պատճառով ակտիվ արտաքին ակտիվ քաղաքականություն չէր կարող վարել:

Վ. Պուտինը իշխանության գալուց հետո Եվրոպայի հետ համագործակցությունը զարգացնելու գործընթացում շեշտադրումը դրեց ռուս-գերմանական հարաբերությունների վրա: Ընդհանուր առմամբ այն հաջողությամբ չպսակվեց: Գերմանական Infratest dimap սոցիոլոգիական ինստիտուտի հարցումների (2014 թ. նոյեմբեր) համաձայն Գերմանիայի բնակիչների 48% Ղրիմը չի ճանաչում որպես ՌԴ տարածք (կողմ 39%), իսկ 54%-ը Վ. Պուտինի վարած քաղաքականությունը վտանգավոր է համարում (43% անմիջական սպանալիք չի հավատում)[22]:

Դրա հիմնական պատճառներից է այն հանգամանքը, որ գերմանացիները գտնում են, որ իրենց արևմտյան համակարգը սառը պատերազմի ընթացքում հաղթել է, իսկ պարտված Ռուսաստանը իրենց այնքան էլ հետաքրքիր չէ: Գեմանացի հայտնի քաղաքագետ Ա. Ռաոի կարծիքով գերմանացիները ապրում են լիբերալ արժեքների և արևմտյան ժողովրդավարության հաղթարշավի զգացումով, որն անհրաժեշտ է ոչ միայն պաշտպանել, այլև այլ երկրներ ու մայրցամաքներ արտահանել ցանկացած, նույնիսկ ագրեսիվ մեթոդներով[23]: Եվրոպական վերջին սերունդները մեծացել են խաղաղ և բարգավաճ պայմաններում: Նրանք իրենց ավելի խելոք և բարձր են զգում, քան մյուս ժողովուրդները: Սառը պատերազմի ընթացքում եվրոպական վերջին սերունդները, գտնվելով ԱՄՆ-ի ոչ միայն քաղաքական, տնտեսական, այլև գաղափարական վերահսկողության ներքո, համոզված են, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծողները Ստալինն ու Հիտլերն են, իսկ ամերիկյան բանակը Եվրոպան փրկեց ինչպես հիտլերականներից, այնպես էլ Կարմիր բանակից: Պատահական չէ, որ ներկայումս եվրոպացիների զգալի հատվածի մոտ գերիշխում են երկու գաղափարներ՝ տրանսատլանտիզմը (ԱՄՆ-ը որպես Եվրոպայի փրկիչ) և լիբերալ սրբազան Եվրոպայի գաղափարը (որը եվրոպական ժողովուրդներին երաշխավորում է խաղաղություն, կայունություն և բարգավաճում): Այդ իսկ պատճառով համագործակցության վերաբերյալ Ռուսաստանից եկող ազդակները միշտ չէ, որ բարենպաստ արձագանք են գտնում: Օրինակ, միթե՞ Եվրոպայի շահերից չէին բխում Վ. Պուտինի կողմից առաջ քաշված այնպիսի մի շարք նախաձեռնությունները, ինչպիսիք են էներգետիկ այլանսը, Սիբիրի համատեղ յուրացումն ու արդիականացումը, կամ Ռուսաստանի ընդգրկվելը եվրոպական հակահրթիռային պաշտպանությունում՝ ապահովելով վերջիններիս պաշտպանությունը Մերձավոր Արևելքից և Ասիայից, Եվրոպան Արևելյան Ասիայի հետ որպես ամենակարճ ճանապարհ ռուսական հյուսիսային ուղու օգտագործումը և այլն:

Հրահրելով ուկրաինական ճգնաժամը՝ Վաշինգտոնը հույս ուներ մեկ հարվածով երկու խնդիր լուծելու: Եթե ուկրաինական ճգնաժամի ընթացքում ռուսական բանակը անմիջականորեն մասնակցի ռազմական գործողություններին, ապա ԱՄՆ-ն իր Եվրոպական դաշնակիցներին մեկ անգամ ևս կապացուցի իր կարևորությունը նրանց «բարբարոսներից» պաշտպանելու գործում: Եթե ռուսական իշխանությունները մնան դիտորդի կարգավիճակում, ապա Վ. Պուտինը ձեռք կբերի թույլ քաղաքական գործչի համբավ և հասարակության զգալի մասի մոտ կառաջացնի դժգոհություն ու հիասթափություն:

Ինչ որ տեղ Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի վարած քաղաքականությունն է ստիպում, որպեսզի հեղինակազրկվեն լիբերալ արժեքները: Լիբերալիզմը ենթադրում է խոսքի ազատություն (Սիրիա, Իրաք, Վրաստան, Ուկրաինա), ազատություն (արդյոք ԱՄՆ-ը թողնում է ընտրության իրավունք իր դաշնակիցների համար), մրցակցություն (ԱՄՆ-ը փորձում է միահեծան ղեկավարել): Լիբերալները, որոնք միշտ հպարտացել են մարդու իրավունքների և խաղաղության համար իրենց անզիջում պայքարով, ուկրաինական դեպքերի հետ կապված մեկ անգամ ևս ցուցադրեցին իրենց իրական դեմքը:

2008 թ. օգոստոսյան վեցօրյա պատերազմով Մոսկվան իր ընդդիմախոսներին փորձեց հստակորեն հասկացնել, որ երբեք չի համաձայնի, որ Ուկրաինան, կամ Վրաստանը, ընդգրկվեն ՆԱՏՕ-ում: ՌԴ իր շահերի հետ անհամատեղելի համարեց նաև 2008 թ. մայիսից ԵՄ կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության» ծրագիրը, որի իրական նպատակը ԱՊՀ տարածքում Ռուսաստանի ազդեցության կրճատումն է և ԵՄ դերակատարման մեծացումը:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Մ. Գորբաչովի և Բ. Ելցինի կառավարման շրջանի հետ համեմատած, երբ ընթանում էր զինաթափման, «տաք վայրերից» զորքերի դուրս բերման քաղաքականություն, իսկ ԱՄՆ-ը հանդիսանում էր Ռուսաստանի «լավագույն բարեկամը»՝ ռուսաստանցիները ներկայիս լարված շրջանն ավելի անվտանգ են համարում, իսկ միջազգային իրավիճակը, ավելի կայուն[24]:

Ուկրաինական ճգնաժամը ուղղակի առումով կարելի է դիտարկել նաև որպես Արևելք-Արևմուտք հակամարտություն: Արևմուտքը՝ կաթոլիկ և բողոքական աշխարհն է, իսկ Արևելքը՝ ուղղափառ և մահմեդական: Արևելքը, ի տարբերություն Արևմուտքի, ավելի պահպանողական է, եթե Արևմուտքում կրոնական առումով եկեղեցին անկում է ապրում, ապա Ռուսաստանում վերջին շրջանում և՛ ուղղափառությունը, և՛ իսլամը ամրապնդել են իրենց դիրքերը: Արևմուտքի կողմից Արևելքի թուլացման հնարավոր ուղիներից մեկը նրա մասնատումն է փոքր պետությունների, որոնք կդավանեն արևմտյան լիբերալ արժեքները, այսինքն՝ կլինեն ազգային իրենց բնույթով, սակայն լիբերալ՝ իրենց բովանդակությամբ: Նման ձևով Արևմուտքը ժամանակին տրոհեց Օսմանյան կայսրությունը, Ռուսական կայսրությունը, Բալկանները, և Մերձավոր Արևելքը: Ներկայումս Արևմուտքը համախմբված և միավորված է երկու կառույցներում՝ ԱՄՆ և ԵՄ, իսկ Արևելքը տրոհված է բազմաթիվ պետությունների, և այդ գործընթացը դեռևս շարունակվում է: Արևմուտքի նպատակը Ուկրաինայի հետ ինտեգրվելը չէ: Արևմուտքը կարող էր այն արագացված տեմպերով իրականացնել 2004 թ. «նարնջագույն» հեղափոխությունից հետո: 40 մլն բնակչությամբ, և տարածքով ամենամեծ եվրոպական երկիրն իր բազմաթիվ հակասություններով հարկավոր չէ Եվրոպային (ինչպես հարկավոր չէ նաև Թուրքիան): Ուղղակի Արևմուտքի հիմնական խնդիրն է թույլ չտալ, որ Ուկրաինան և Ռուսաստանը միավորվեն, այլ այդ երկիրը օգտագործեն որպես հենակետ Մոսկվայի դեմ պայքարում:

Պահպանողական Ռուսաստանին բավարարում էր, որ պահպանվեր 1990-ական թվականներին բնորոշ ռուս-ուկրաինական հարաբերությունների որակը, այսինքն՝ տեսնել անկախ, բայց բարեկամական երկիր: Սակայն ռուսական հասարակական կարծիքի, ռուսական «հոգու համար» Ուկրաինան դիտարկվում է որպես ռուսական աշխարհի բաղկացուցիչ մաս: Հեռավոր Արևելքի բնակչության մեծ մասը ունի ուկրաինական արմատներ, ռուսական արդյունաբերությունը ձևավորվել է Ուկրաինայում և ռուս-ուկրաինական հարաբերությունները չենք կարող համեմատվել Ավստրիա-Գերմանիա հարաբերությունների հետ (որտեղ էթնիկ մոտ ժողովուրդները միշտ եղել են տարբեր պետություններում): Ռուսական պահպանողականությունը նկատի ունենալով իր ռեսուրսների սահմանափակությունը, կարող է համակերպվել Ուկրաինայի անկախության, սակայն ոչ «լիբերալ Ուկրաինայի» հետ:

«Վալդայի դիսկուսիոն» ակումբում իր ելույթի ժամանակ Վ. Պուտինը նշեց, որ ժամանակակից ռուսաստանյան կոնսերվատիզմը և լիբերալ դեմոկրատիան անհարիր են իրար: Բ. Ելցինի նախագահության շրջանում տնտեսությունում և քաղաքականությունում իրականացված քաղաքականության գաղափարական հենքը լիբերալ դեմոկրա-

տիան էր, որն իր հեղափոխական բնույթով ժխտում էր նախկին խորհրդային և կայսերական անցյալը: Վ. Պուտինի կարծիքով՝ այն ճիշտ մոտեցում չէ[25]:

Վերջին տարիների ընթացքում, երբ սրվեցին հարաբերությունները ԱՄՆ և ԵՄ հետ, ռուսաստանյան «պահպանողական մեծամասնության» կարծիքով՝ լիբերալ Արևմուտքը նպատակ է հետապնդում ոչնչացնելու ռուսական հոգևոր արժեքները;

Իսկ ինչպե՞ս պետք է վարվեն ռուս լիբերալները ստեղծված իրավիճակում վերջնականապես չփոշիանալու համար: Համենայն դեպքում ոչ այնպես, ինչպես գործում են ներկայումս: Նրանք պետք է իրենց արևմտյան և ուկրաինական քաղաքական և տնտեսական գործընկերներին փորձեն համոզել ուկրաինական ճգնաժամի հարցում ընդհանուր համաձայնության գալու, Ուկրաինայում կլոր սեղանի շուրջ նստեցնելու հակամարտող կողմերին: Այդ ամենը պետք է իրականացվի ոչ թե հանձնելով, այլ պաշտպանելով Ռուսաստանի ազգային շահերը: Երբ լիբերալ Արևմուտքը ցուցադրում է, որ ոչ մի ցանկություն չունի հաշվի նստել ռուսական շահերի հետ, ապա բնական է, որ քաղաքական որոշումներ ընդունող ռուսական իշխանությունների կենտրոններից, պետք է աստիճանաբար հեռացվեն բոլոր այն լիբերալները, որոնք գլոբալ առումով ընդունում են ԱՄՆ-ի դոմինանտ դերը: Լիբերալները որոշակի առումով կապող օղակ էին Արևմուտքի և Կրեմլի միջև, իսկ այժմ դրա անհրաժեշտությունը չկա:

Եթե լիբերալ Արևմուտքը գտնում է, որ Ռուսաստանում հաստատվել է ավտորիտար վարչակարգ, ապա միթե ԱՄՆ-ը և ԵՄ իրենց անհեռատես քաղաքականությամբ չեն ապահովում այդ իշխանության ամրապնդումը: Նրանց քաղաքականության «օգնությամբ» միայն 2014 թվականի սկզբի հետ համեմատած Վ. Պուտինի հեղինակությունը երկու ամսվա ընթացքում աճց 18% և հասավ 87%: Նման ցուցանիշ եղել է նաև Վրաստանի հետ 2008 թ. օգոստոսյան պատերազմի արդյունքում: Եթե 2009 թ. արտաքին քաղաքականությամբ հետաքրքրում էին հիմնականում բարձրագույն կրթություն ունեցող տարեց մարդիկ, իսկ մինչև 25 տարեկանները կազմում էին 11-12%, ապա 2014 թ. երիտասարդության տեսակարար կշիռը կազմեց մոտ 50%: 2013 թ. արտաքին քաղաքականությամբ հետաքրքրվում էր բնակչության 23, իսկ 2014 թ.՝ արդեն 45%: Ռուսաստանցիների 61% հավանություն են տալիս, որ իրենց քաղաքացիները մարտնչում են Արևելյան Ուկրաինայում[26]:

Ուկրաինական ճգնաժամը բավական բարձր մակարդակի հասցրեց ռուսաստանյան հասարակության սպասումներն ու հավակնությունները: «Լիբերալ» Արևմուտքի իրականացրած պատժամիջոցները նրանց սպասված արդյունքը չտվեցին, որովհետև խորհրդային դիվանագիտության գլխավոր նվաճումը՝ երկբևեռ աշխարհակարգը, ինչպես նաև սառը պատերազմը խորհրդային ժողովրդի մոտ ասոցացվում էր կայունության և անվտանգության հետ: Այդ իսկ պատճառով ռուսական հասարակության շրջանում ՌԴ նկատմամբ պատժամիջոցների կիրառումը հակառակ արդյունք է տալիս: ՌԴ քաղաքացիների 47% չի վախենում մեկուսացումից, իսկ մի մասը պատժամիջոցները ընկալում է ռուսական «վախենում են, նշանակում է հարգում են» սկզբունքով: Ռուսաստանցիների հոգեբանությամբ մնացած աշխարհի համար իրենց երկիրը ուժեղ են դարձնում բանակը և սպառազինությունները, այլ ոչ թե գիտությունը, մշակույթը, տնտեսությունը, կամ լեզուն[27]: Սակայն պարզ է մեկ հանգամանք, որ Ռուսաստանը թևակոխել է բավական բարդ մի շրջան, քանի որ նրա առջև ծառացած խնդիրների լուծումը պահանջում է ոչ միայն հասարակության, այլև Վ. Պուտինի և ներկայիս իշխանությունների կողմնակիցների (որոնց միջև առկա են գաղափարական տարաձայնություններ) համախմբում:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման համառուսաստանյան կենտրոնի (ВЦИОМ) տվյալների համաձայն՝ 1992-93 թթ. ռուսական հասարակության երկփեղկվածությունը լիբերալների և «կոմունիստների» միջև էր: 2000-ական թվականներին ուժեղացավ քաղաքական կենտրոնի դերը, որը նույնացվում էր Վ. Պուտինի հետ[28]: Վ. Պուտինի նկատմամբ հասարակության աջակցությունը և համակրանքը բացատրվում է այն գաղափարական սինթեզով, որն անհնար էր իրականացնել 1990-ական թվականների սկզբներին: Այդ շրջանում Վ. Պուտինը կարծես թե «աջ» էր՝ համոզված շուկայական հարաբերությունների կողմնակից, սակայն նրան բնորոշ էր նաև «ձախությունը»: Նա հանդես էր գալիս որպես թույլերի պաշտպան, միաժամանակ նաև հայրենասեր-պետականամետ գործիչ էր, որն աշխատում էր աշխարհում ամրապնդել Ռուսաստանի դիրքերը: 2004-2006 թթ. ռուսաստանյան հասարակության համակրանքը ավելի շատ «ձախերի» կողմն էր քան թե «աջերի»: Այս շրջանում հարցվածների 35.6% իրեն համարել է «ձախ» (սոցիալական արդարության կողմնակից), 19.1% «աջեր» (շուկայական հարաբերությունների և քաղաքական դեմոկրատիայի կողմնակից), իսկ 16.7% հարում էին ռուսական ազգային և քաղաքական ավանդույթներն[29], 2014 թ., համաձայն «Լևադա կենտրոնի» հարցումների, ռուսաստանյան հասարակությունում Արևմուտքի կողմնակիցների թիվը կազմում է մոտ 21%, ներկա քաղաքական համակարգի օգտին դրական է արտահայտվել 19%, իսկ խորհրդային համակարգի կողմնակիցները՝ 39%[30]: Ինչ քայլեր պետք է ձեռնարկեն իշխանությունները ծառացած մարտահրավերներին պատասխանելու համար: Ստեղծված իրավիճակում, երբ բնակչության մոտ 21%-ն ունի լիբերալ արժեքներ, իշխանություններին անհրաժեշտ է «կարմիրների» 39% աջակցությունը՝ դրանով իսկ իրենց կողմնակիցների թիվը դարձնելով 58%: Պուտինի խնդիրն է ավարտին հասցնել «ռուսական գարունը», այսինքն՝ ավարտին հասցնել «հեղափոխությունը»: Այստեղ հիմնական «բացթողումը» գաղափարախոսության և իրենց առջև ծառացած խնդիրների հաղթահարման ռազմավարության բացակայությունն է (օրինակ՝ ռուսական ռեալիզմի և Եվրասիական միության հակադրությունը): Գաղափարախոսությունը նախ և առաջ նպատակներ են ու արժեքներ: Վ. Պուտինը դեռևս տատանվում է: Նա որոշակի առումով դեռևս հավատում է շուկայական տնտեսությանը և լիովին չի հավատում նրանց, ովքեր պատրաստ են իրեն աջակցելու, ինչպես նաև դանդաղեցնում է որոշ գործիչներից ազատվելու և նոր ուժերի ընդգրկման գործընթացը:

Ներկայիս հայրենասիրական վերելքը չի կարող ռեսուրս հանդիսանալ տնտեսական թռիչքի, կամ զարգացող տնտեսական ռեցեսիան կանգնեցնելու համար: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը իրեն սպառած ինստիտուցիոնալ համակարգն է, որը կազմված է տարբեր օլիգարխիկ բիզնես-էլիտաներից, իրենց հիերարխիան ունեցող կլաններից: Նման համակարգը խոչընդոտում է երկրի համակողմանի զարգացումը, ծնում կոռուպցիա, անհամեմատ ավելացնում պետական ապարատի ծախսերը և փոշիացնում ցանկացած պետական կարևոր ծրագրեր:

Ժամանակը կպատասխանի վերոնշյալ բոլոր հարցերին, սակայն պարզ է մեկ հանգամանք, որ ուկրաինական ճգնաժամը վճռական ու որոշիչ հարված հասցրեց ռուսական լիբերալիզմին և Ռուսաստանին մղեց փնտրելու զարգացման իր ուրույն վեկտորը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Mearsheimer J., Why the Ukraine Crisis is the West's Fault (The Liberal Delusions That Provoked Putin) – www.foreignaffair.com/articles/141769/john-j-mearsheimer/why-the-ukraine-crisis-is-the-wests-fault
2. Նույն տեղում:
3. Նույն տեղում:
4. Россия vs Европа. Противостояние или союз?/ под ред. С. А. Караганова, И. Ю. Юргенса. М., Астрель, Русь-Олимп, 2010, стр. 10.
5. Юргенс И., Российская политическая система в тупике // imrussia.org/ru/society/120-igor-yurgens-russian-political-sistem-is-the-dead-one
6. Юргенс И., До каких пор мы должны быть Византией?

http://www.ng.ru/ng_politics/2010-03-16/9_yurgens.html

7. Иноземцев В., Россия и мировые центры силы – polit.ru/article/2005/05/25/power
8. Иноземцев В., Контуры посткризисного мира // Россия в глобальной политике, 2009, № 3, стр. 82-91.
9. Тренин Д., Угрозы XXI века – polit.ru/article/2006/07/12/trenin
10. Тренин Д., Интеграция и идентичность: Россия как "новый запад", М., Европа, 2006, стр. 11.
11. Тренин Д., Внешняя политика: Какую роль могла бы играть Россия в новом десятилетии – http://carnegie.rupublications/?fa=42205
12. Тренин Д., Какая такая Российская империя? – http://carnegie.ru/publications/?fa=45436
13. Նույն տեղում:
14. Мельвиль А. Либеральная внешнеполитическая альтернатива для России? // Внешняя политика и безопасность современной России. 1991-2002. Хрестоматия в 4-х томах, т. 1, стр. 334.
15. Նույն տեղում, էջ 336:
16. Նույն տեղում, էջ 338:
17. Злобин Н., Второй новый миропорядок: Геополитические головоломки. М., Эксмо, 2009, стр. 281.
18. Նույն տեղում, էջ 283:
19. Отношения России и США, newsruss.ru/doc/index.php/Отношения_России_и_США
20. Совместная декларация Президента ВВ. Путина и президента Дж. Буша о новых стратегических отношениях между Российской Федерацией и Соединенными Штатами Америки.- www.armscontrol.ru/start/rus/docs/jointdeclo602.htm
21. На неверном пути: что может и должен сделать Вашингтон в отношении России и США (доклад независимой рабочей группы при поддержке Совета по международным отношениям США), Руководитель проекта Стивен Сестанович, Совет по международным отношениям, 2006, стр. 18.
22. Опрос: Почти 40 процентов немцев согласны признать Крым частью России – russian.rt.com/inotv/2014-11-24/Opros-Pochti-40-procentov-nemcev
23. Рар А., Путин и Запад. От любви до ненависти. М., Алгоритм, 2014, стр. 187.
24. Նույն տեղում:
25. Заседание Международного дискуссионного клуба "Валдай".- kremlin.ru/news/46860
26. Бызов Л., Украинский кризис и внешнеполитические приоритеты российского общества.- www.perspektivy_info/rus/ekob/ukrainskij_krizis_i_vneshnepoliticheskije_prioritety_rossijskogo_obshhestva_2014_09_02.html

27. Նույն տեղում:
28. Идейно-политические симпатии, Пресс. выпуск № 446, wciom.ru/index.php?id:2604
29. Նույն տեղում:
30. Власть и Октябрь – zavtra.ru/content/view/Vlast_i_oktyabr/

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ուկրաինական ճգնաժամը և ռուսական լիբերալիզմը
Մարութ Վարդազարյան

Ուկրաինական ճգնաժամը արտացոլվեց ոչ միայն ռուս-ուկրաինական, այլև Արևմուտք-Ռուսաստան փոխհարաբերություններում: Այն անդրադարձավ նաև ռուսաստանյան հասարակության ինքնագիտակցության վրա, ծավալվեցին քննարկումներ ՌԴ զարգացման վեկտորի ուղղությունների, իշխանության և հասարակության միջև ձևավորված հարաբերությունների շուրջ:

Ստեղծված իրավիճակում ռուս լիբերալները վերջնականապես իրենց ազդեցությունը չկորցնելու համար պետք է պաշտպանեին, այլ ոչ թե անտեսեին Ռուսաստանի շահերը, օգտագործեին իրենց կապերը արևմտյան և ուկրաինական քաղաքական շրջանակներում ընդհանուր կոնսեսուսի (համաձայնության) գալու համար: Ուկրաինական ճգնաժամը էական հարված հասցրեց ռուսական լիբերալիզմին և Ռուսաստանին մղեց փնտրելու իր ուրույն զարգացման վեկտորը:

Բանալի բառեր՝ *ուկրաինական ճգնաժամ, ՆԱՏՕ, ԵՄ, ԱՄՆ, ՌԴ, լիբերալիզմ, ԱՊՀ, Արևմուտք-Արևելք.*

РЕЗЮМЕ
Украинский кризис и русский либерализм
Марут Вардазарян

Украинский кризис отразился не только на российско-украинских отношениях, но и на отношениях России с Западом. Он затронул также уровень самосознания российского общества, подтолкнув ход общественных обсуждений относительно вектора развития России и сформированных между обшеством и властью отношений.

Для того чтобы окончательно не растерять свое влияние в обществе, российские либералы должны были не пренебрегать интересами России, а всемерно защищать их, используя свои связи с политическими кругами Запада и Украины, и добиваться всеобщего консенсуса. Украинский кризис нанес существенный удар по либерализму в России и направил страну на активный поиск собственного уникального вектора развития.

Ключевые слова*: украинский кризис, НАТО, ЕС, США, РФ, либерализм, СНГ, Восток-Запад.*

SUMMARY
The Ukrainian crisis and Russian liberalism
Marut Vardazaryan

The Ukrainian crisis had its impact not only on the Russian-Ukrainian relations but also on the West-Russia relations. It also had its impact on the self-conciousness of the Russian society. Discussions evolved connected with the directions of the development of the Russian Federation vector, about the shaped relations between the authorities and the society.

In this situation the Russian liberals in order not to finally lose their influence should have defended and not ignored the interests of Russia, and should have used their ties with the western and Ukrainian political circles to reach general consensus.The Ukrainian crisis essentially stroke Russian liberalism and led Russia seek it's unique development vector.

Keywords: *the Ukrainian crisis, NATO, the EU, the USA, the RF, liberalism, CIS, East-West*